

ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ՈՐՈՆՄԱՆ, օգտակար հանածոների հանքավայրերի որոնման մեթոդներ՝ հիմնված երկրակեղևի վերին հորիզոններում, մթնոլորտի մերձգետնյա մասերում, ինչպես նաև կենսոլորտում քիմիական տարրերի տարածման և տեղաբաշխման օրինաչափությունների ուսումնասիրության վրա: Ամեն մի հանքային մարմնի շուրջ գոյություն ունի անոմալ երկրաքիմիական դաշտ, որի քիմ. տարրերի պարունակությունները տարբերվում են ապարներում եղած սովորական (ֆոնային) պարունակություններից: Քիմ. տարրերը հանքային մարմնի շուրջ առաջացնում են ցրման (եթե տարրերի պարունակությունները մեծ են համապատասխան ֆոնայինից) և տարրալուծման (եթե փոքր են ֆոնայինից) պսակներ: Երկրաքիմիական անոմալ դաշտում քիմ. տարրերը միշտ տեղաբաշխված են որոշակի զոնայականությամբ, իսկ ցրման պսակների չափերը սովորաբար շատ ավելի մեծ են դրանցում պարփակված հանքային մարմինների չա-

փերից: Ըստ հետազոտվող երկրաքիմիա-
կան դաշտի բնույթի, առանձնացվում են՝
լիթոքիմիական, ջրաքիմիական, գազային և
կենսաքիմիական Ե. մ. ո.: Երկրաքիմիա-
կան ուսումնասիրությունների հիման վրա
կազմվում են ցրման պսակների քարտեզ-
ներ և կտրվածքներ, որոնք երկրաբանա-
կան և երկրաֆիզիկական տվյալների հետ
օգտագործվում են օգտակար հանածոների
որոնումների և կանխատեսումների հա-
մար: Ե. մ. ո. սերտ կապի մեջ են տեսա-
կան երկրաքիմիայի, երկրաբանական այլ
դիսցիպլինների հետ: Մեծ կիրառություն
ունեն վիճակագրական մաթեմատիկական և
հաշվիչ մեքենաները: